

X ՅԱՂԹԱԿԱՆ ԿՈՅՍԸ

Ա.

Իշխան մը կայ հարուստ, հղօր թագակիր,
իր ասսածնին ոտքին տակ հողն ու երկիր.

Աչքէն զայրոյթ դէմքէն սարսափ կը ցայտի,
Սրտէն միայն անդութ հրաման կը ծընի:

Դաժան է նա կաշկանդած է ողջ երկիր,
իւր գերիներ կը տառապին վըշտակիր.
Անողոք է, ծրծէ արիւն անխնայ,
իւր ոսկի գահ արտասուքով կը լուսյ:

Որչափ սրբներ նա կործանեց հիմովին,
Որչափ քաշեր նա զո՞ն բերաւ իւր սըրին.

Ուր որ երթայ, անդ գերեզման կը բացուի,
Գարշապարէն կը ցայտի մահ ոսսկալի:

Անարդար է և սղձութեամբ սիրտը լի,
Հրամանն անդարձ, որմէ երկիր կը սարսփ.
«Ուրտեղ գտնէք աղջիկ՝ լուսնի պէս սիրուն,
Բերէք իմ քով, բերէք պալատս զարդարուն»:

Այդ երկին մէջ կայ մի ազնիւ ընտանիք,
Պատուով հարուստ, անկեղծ սիրով երշանիկ.

Անդ կը շողայ պարկեշտութիւն, շնորհք, յարդ,
իւր ժպիտով Աստուած օրհնած է այդ յարկ:

Ընտանեաց հայրն բոլորի լշյն է անդին,
Եւ հնազանդ՝ միշտ ահաւոր իշխանին.
Մայրը չքնաղ պերճ թագունի իւր տան մէջ՝
Զաւակնրեուն կուտայ նա միշտ սէր անշէջ,

Սակայն այս տան զարդն է պայծառ ու շըքեղ
 Ալշիկ մկարծես ծրնած երկնէն կապտաղեղ.
 Հողին ամրիծ, աչքերն աստղիկ, վարդ երես,
 Զայնը քնքուշ շինշ վտակի երգին պէս:
 Առաւօտեան երր կը դիտէ նա երկին,
 Ակգուն վարդեր այտերուն մէշ կը ծաղկին.
 Եւ իւր ժամեր ափւոյն առշի նրշուլէն
 Հիւսուած, խուրծ խուրծ կը փրփրին վար ուսերէն:
 Անոր-Քուրիկ-կը կոչէ պերն արշալցու,
 Անոր տեսքէն ամէն հողի կ'առնէ լոյս.
 Քաղաքին մէշ հրեշտակ մ'է նա չքնաղ
 Եւ պաշտպանող որթին, խեղճին անսրւադ:
 Լըսեց իշխանն աղջկան համբաւ պանծալի,
 Մոայլ իւր սիրա նոր տարփանքով կ'արծարծի.
 «Պէտք է բերէք, շուտ, այդ աղջիկն դահիս տակ,
 Անոր այտերն մարեն թերևս սէրս անլադ:
 Մեծամեծներն անոր հօրը քովն եկան,
 Ոսկի, գոհար ընծայ բերին աղջրկան.
 «Փափուկ դստերդ մեր քաջ իշխանն է կարօտ,
 Հրամանն է, տանենք. անոր իրեն մօտ»:
 «Հեռո՛ւ ինձմէ, գոչեց տաղիկն զայրադին,
 Թող արժգունին ծեր նրւ էրներ թանկաղին.
 Սև իշխանին չեմ տար սէրս աննրման,
 Մեծ տիրոջ մը չի վայելեր այդպէս բան
 Ի՞նչ պէտք ինձի՛ իրեն փառքերն յաղթութիւն
 Երր գիշեր է իր սիրա, հոդին դառըն թոյն.
 Կը զարհուրիմ իւր աչերէն նուաղկոտ,
 Թող ըր դպչին ինձ իւր ծեռքերն արիւնոտ:
 Աւերակաց մուխով սեցած է իւր թագ,
 Թող զահակից լինի իրեն կին վայրադ.
 Թող փերիներն հրաւիրէ շուրջ գահին,
 Հէք տատրակըս, ո՞հ, մի մատնէք չար բրւին:
 Բ.
 Կաստղեցաւ իշխանն, գաղան է վայրադ,

Բերանն փրփրահոս, դէմքն այլագունակ.
 Զի հոնդուրժեր սիրտն, կը ժայթքէ լեղի,
 Կը փշրէ ցասմամբ գոհարներն թագի:
 Ինքն իշխան հզօր և տէր բալորին
 Կրնա՞ն իսկ մերժել իւր հրաման չնչին,
 Կրնա՞ն չպազնել իւր ոտքին սև հոդ.
 Նա ամրող երկիրն կը հանէ ի դոդ:
 Բոյց ահաւասիկ աղջիկ մը տկար,
 Կը ժպրհի զինքը կոչել անտրդար.
 Կ'անարգէ իւր գահ, իւր փառքն ու իւր ոէր,
 «Վաստ դաղան է նա», կ'ասէ անվեհեր:
 Կը գուայ իշխանն և ձայնն ահոելի
 Սարսափ կը ծրդէ ամէն ցած սրտի.
 «Ելէ՛ք, զինուորներ, կապեցէ՛ք սուսեր,
 Պատժեցէ՛ք բոլորն, պատի՛ժ մահարեր»:
 Միրուն ասպետներն դըլխահակ կեցած
 Կը լրսեն հրաման սաստիկ ու անդարձ.
 «Պիտի կօրծանէք անոնց տունն ամբողջ,
 Միայն այն աղջիկն կը բերէք ինծ ողջ:
 Կ'երթան զինուորներ մրույլ գիշերին
 Հոյակապ, ճոխ տան կը պատեն չորս դին.
 Սուրերու շաչիւն կը սիփոէ սարսափ,
 Նախնիր կը գործէ ներտեռ տարափ:
 Եւ ահա կրակն ցայտեց կարմրագոյն
 Վիշտապի նման պաշարեց խեղճ տուն,
 Շաշելով կը նկնին սիւներն ու գերան,
 Անդութ զինուորներն հրպարտ կը խնդան:
 Վիրաւոր ընկաւ մայրն աղջիան տուած.
 Կըրակն ալ խեղդեց իւր վերջին հառաչ.
 «Մայրիկ», կը կանչեն մանուկներն սիրուն,
 Արեան տաք հեղեղ ողղեց սև անիւն:
 Մուկսը բարդ ու բարդ կը սուրայ երկին,
 Հողմերն հիւսիւսի կը փչեն ուժգին,
 Հրդեհն աւելի կը ցայտէ կայծակ,

Ողբերն աւելի կուտան արծագանդ:

Փառաշուք այն տունն դարձաւ աւերակ:

Դիտապաստ բնկան մայրերն ու զաւակ:

Ոչ ոքին զթաց իշխանին վառ սուր:

Ոչ ոքին խղճաց անոնց վառած հուր:

Դերի՛ բռնեցին հայրը սրգաստուեր,

Զթողին գոնէ աղէտն իւր տեսնէր.

Բայց ո՞ւր է արդեօք աղջիկն իւր շքեղ.

Ոչ մէկը կրցաւ գտնել անոր տեղ:

Հայրը մութ բանտը ծդին անխնայ,

Զեռքերուն դարկին պողպատէ շղթայ,

Եւ ան, զոր Աստուած կը սիրեր այնքան,

Մարդիկ ու բանտին արժանի դտան:

Ո՞հ, խնդրեմ, ինծ ալ այլեցէք մէկէն

Դուք, որ այլեցիք տունս հոյաշէն.

Ապրել, երբ մեռաւ ընտանիքս անդին,

Նրւաղ ճրտդ մ' եմ անոր դամբանին:

Ո՞ւր էիր արդեօք, ո՞վ մահ փրկարար,

Ի՞նծ գէպի երկինք ինչո՞ւ չտարար.

Արեւ, որ աղէտս անհոտ դիտեցիք,

Այ ի՞նչպէս նայիմ երեսդ ոսկեծիրէ

Կողայ թշուառ հայրն, բայց անզութ բոլոր,

Անհուն տանշտնքներ կուտան ամէն օր.

Փետտեցին մազերն, փորձեցին դոյդ ազք,

Ընտանեաց սուրբ հայրն եղաւ անարդանք:

Կը վիսայ իշխանն, և ձայնն է դժխեմ,

«Ես այսպէս ահա վրէժ կը լուծեմ.

Ոչ ոք յանդզնի ատել իմ անուն,

Բուերու բընիկ կը դարձնեմ իւր տուն»:

Գ.

Մութ ձօրին մէջ ո՞վ է արդեօք

Կը թափառի այսպէս մինակ,

Կը թուչի զինչ տարակ անոք,

Մխուած կուրծքին փայլուն սրլաք:

Աղջիկ մ'է սա գէմքն լուսաղղեաց
 Կ'անցնի՛ արագ ոտքերն բորիկ,
 Ինչպէս թըրիկ բոցէն վառուած
 Խըլած գետնէն ուժդին մրրիկ:
 «Եկուր մեր քով, մենք անվեհեր,
 Քեզ կը պահենք», կըսեն կաղնիք.
 «Մի՛ երկնչիր, գոչեն լեռներ,
 Մենք քեզ պաշտպան ենք սիրով լիք»:
 Բայց նա կ'ողբայ միշտ սըրտադող,
 Կուլան իւր հետ սիւքն ու վըսակ
 Մեծ ընտանեացն միակ լացող,
 Պայծառ է նա ինչպէս հրեշտակ:
 Նա կը դիտէ լեռնէն տժդոյն
 Հայրական տունն՝ մուլթ աւերակ,
 Մայրիկն ընկած կուրծքին գաշցն,
 Դառն տղէսախն զարդն սեղրակ:
 Կը բարձրանայ գեռ մուխը վեր
 Խեղճ ընտանեաց շունչն է մոլար,
 Մարդն ու պարտէղն, պյուիքն աւեր:
 Վայրողութեան պատկեր խաւար:
 Ո՞հ, կը դիտէ աղջիկն այսպէս,
 Կը կայլակէ սիրսէ վէտ վէտ.
 «Ես բոլորն ալ ե՞ս ըրի, ե՞ս,
 Իմ պատճառովս այսքան աղէտ:
 Սպաննեցի տօւնս համօրէն
 Միայն չնչին պատշոյս համար,
 Ազատեցի հոգիս բոցէն,
 Կրակի տօւի պարտէղն ու ծառ:
 Մայրըս, որ ինձ գրիկը իւր ծոց,
 Գրկեց այժմ մահն դառնալիր.
 Եւ այն արեամբ, որ ինձ սընոյց
 Իւր ճերմակ կուրծք ներկեց կարմիր:
 Սարսափեցայ դաղանէն վատ,
 Իւր ժանիքէն ինձ փրկեցի

Բայց ո՞հ, հայրիկս քաղցր, հարազատ
Զըդեցի վիճն մըռայլ բանտի:
Դ.

Աւ զիշեր մ'է մութ են ծոր, լեռ,
Թուխալերն խեղղած են աստղեր.
Մեղմիկ երգող չկայ մի ձայն,
Ողջ բնութիւնն է դամբան:
Փառած է կոյսն կարմիր ժայռին,
Սիրտը սեղմած պաղ քարին,
Քարն իսկ շեռնու վշտէն անբաւ,
Որչափ սաստիկ է իւր ցաւ:

Եւ նըւաղած վշտէն անհուն
Ծունք դրրաւ դողդոցուն,
Պարզեց ծեռքերն դէպի երկին
Մռայլ՝ նրման իւր սրտին:
—Վա՛—մը թռաւ բերնէն զինչ նետ.
Ճեղքեց սմալեր սըգաւէտ.
Վեհ մի աղօթք րղիսեց իւր վէրք
Հնչեց համայն տիեզերք:

«Աստուած ահաւոր, որ բազմած երկին
Կը սարսես աշխարհն միակ ակնարկով,
Ո՞հ, նայէ մէկ ինձ, էակիս չնչին,
Որու սրտին թշն անհուն է քան ծով:
Նայէ մէկ ինձ Տէր, այս ժայռին կատար
Քու քովդ եմ եկած, խնդրել գթէղ մաս.
Դիտէ՛ անհունէն, ո՞հ, թշուառս անճար,
Եւ լսէ՛ ողբերս, դուն ալ պի՛տ ողբաս:
Կո՛յս մեմ տարարախտ պատւյս պատճառաւ
Որ պարզեցեր դու ինձ սրբալի,
Մղեցի կըոհիւ, պահեցի նա լու,
Բայց անձէ վրսեմ բաներ կօրուցի:
Կորուցի մայրիկ՝ պատկեր քո սիրոյն,
Եւ հայրիկս անուշ քո վեհ փոխանօրդ.
Աստուած, ալ չունիմ հայրական սուրբ տուն,

Աւերակաց զաւակն եմ թշուառ ու խօրդ:
 Անողոք իշխանն վիրագ դառներես,
 Կորզեց այդ բոլորն, արդ կը խնդրեմ քեզ,
 Քու ծեռքով անոնք ինձի դարձնես,
 Զի զօրաւոր ես, քան իշխանն այն վէս:
 Թէև վիշտն ու ցաւ, Աստուած բարերար,
 Մարմինս ու հողիս կը լավեն անլագ.
 Բայց խիղճս է հանդիսա և ատօր համար,
 Կը խնդրեմ քեղմէ այսպէս համարձակ:
 Կը պաղատեմ քեզ, սիրոս կը լուսայ
 Կը ցրուես շնչովկ վշտերս զառնադյն.
 Արդարութեան մէջ հիմնած ես քո գահ,
 Միթէ կը մերժես այժմ արդարութիւն:
 Ե.
 Մինչ կոյսն այսպէս հեզ կ'աղօթէր,
 Վսեմ թրոիչ կ'առնէր ծայն
 Կը ցայտէին աչքերն կայծեր,
 Լոյս կուտային մթութեան:
 Տիեզերն յուղուած իւր աղօթքից
 Կը ծայնակցէր քաղցրապին,
 Բոլորն էին իւր ցաւակից,
 Տիրոշ գութը խնդրէին:
 Կուսի մըռայլ սրտում յանկարձ
 Մագեց մի լցոս շողարձակ.
 Ինչպէս զիշերն ամպով պատաճ,
 Կը փողփողէ հիւսիսայդ:
 Դառն վշտաց կապերն ամուր
 Խորտակուեցան միառմի.
 Եւ ճակատի տուքորող հուր
 Մեղմեց զեփիւռն կենսալի:
 Դիտեց երկին նա յուսավառ
 Եւ աչքերէն կապուտսկ
 Առատ ցայտեց արցունք պայծառ
 Մարեց որդին տաք կըրակ:

«Կ'արհամարհեմ իշխանն այն չար,
 նա չէ երկնի տէրն՝ իշխոն.
 Աստուածն ունիմ ևս շողավառ
 իւր աշն ինձի միշտ պաշտպան:
 «Պիտի փշբի իւր գահն ոսկի,
 Տիրէ իւր շուրջ ու սարսափ.
 Ահաւոր է Աստուածն երկնի,
 Զի համբերեր նա այսափի»:
 Կը մրմբնչէր այսպէս անմեղ
 Հոգին երկն կը ճախրէր,
 Սեւ ժայռին հետ կարծես մէկտեղ
 Կը սրլանար զինչ եթեր:
 Եւ տե՛ս, ահա երկնքն խաւար
 Իրեն առջև ճեղքուեցաւ,
 Մռայլ ամպերն սարսափահար
 Փախան իսկոյն լեռներն սեաւ:
 Ճառադայթ մը ցայտեց մէկէն,
 Փայլեց երկն գեղեցիկ.
 Տրեշտակ մ'ելաւ լուսի մէշէն
 Զէնչ մայիսի պերն ծաղիկ:
 Նա մօտեցաւ աղջկանն արի,
 Գրգուեց այտերն աննման,
 Ծրփիկ ծամերն նման շողի
 Անոր ծամին խառնեցան:
 Եւ աչքերէն ցողաց կայծակ
 Անոր աչքին մէջ վսեմ.
 Դէմ առ դէմ են երկու հրեշտակ,
 Մին երկնային, միւսն երկրէն:
 «Քոյր իմ գեղեցիկ, ըսաւ հրեշտակ,
 Ճամբեց ինձ քու մօտ Տէր Աստուած բարին,
 Ազօթքէկ լացին սրովբէք լուսաթաղ,
 Աստուած հառաչեց, և սարսեց երկն:
 Կը սկրէ նա քեղ, պաշտպանդ է հղօր,
 Իւր զօրութենէն կալթ մը կուտայ քեղ.

Պիտ կրնաս անով պատմել յանցաւորն,
 Եւ լուծել վրէմդ, վրէմ բոցակէղ:
 Քեզ զէնք ևմ բերած. ա՛ռ այս սուրն ու տէգ,
 Սոքա սրբուած են Տիրոջ գայրութով.
 Վաշ ոնրագործին, անոնց տուած վիրը
 Երկլնքի մէջ իսկ, չի բուժուր շուտով:
 Կաղէ՛ այս զէնքերն, հեծի՞ր երիվար,
 Թշնամուգ պարատ դնո՞ւ սրարշաւ.
 Թափիէ անդ վրէմդ կայլակն հրավառ,
 Քեզ հետ է երկինք, մի՛ վախնար բնաւ:
 Սըլացաւ հրեշտակն, դոցուեցաւ Երկին,
 Վազեցին ամպերն բունել իրենց տեղ.
 Գրտաւ տիեզերն իւր հանգիստն առջին,
 Եւ նընչեց կոյսր, սիրար սիրազեղ.
 Քնացա՞ւ խաղաղ, և երկինքն ու լեռ,
 Կը դիտեն զնա յուղմամբ հողեռ,
 Լուսին վայրկեան մը նեղեց սև ամպեր,
 Գոնէ մէկ անդամ տեսնել դէմքն անոր:
 Սև ժայռին կատար անուշ կը ննջէ,
 Զեփիւռն իրեն շուրջ կը թռչի վէտ վէտ,
 Կը պահէ զնա ամեն վտանգէ,
 Անոր տաքուկ շունչ կը խառնէ իւր հետ:
 Թուչնիկներն խմբով թառած իրեն քով
 Կը դիտեն երեսն, աչերն լուսազեղ,
 Որ այգուն մէկտեղ ժառելուն շուքով
 Երդեն այդ կուսի, սէրն ու սիրան անմեղ:
Զ.
 Ո՞վ է այդպէս արշաւասոյր կ'ընթանայ,
 Ազգը ճակաին յօրիներ է թագուկէ.
 Լեռներն անոր շուտ կը րանան լայն ճամրայ,
 Կըսեն—մե՛զ ալ խնդրենք, քեզ հետ աղատէ—
 Կը սուրայ նա և հրեղէն իւր նժոյդ
 Գետէն, վիհէն յօրինորատբար կը ցատկէ,
 Մարտի պատրաստ իւր քաջարի կուրծքն առողի,

իւր խրխնջիւն ժայռերուն մէջ կը վանդէ:
 Կոյս մ'է նա վեհ, զրահապատ, ահակլի՛,
 Սաղաւարտը՝ զլիսին արփի կը շողայ.
 Լանջապանակն՝ կուռ երկաթէ կը փայլի,
 Կայծակնացայտ սրունապաններն են ուկեայ.
 Կոյս մ'է քնքուշ, բայց դիւցազն է քաջ ու վէս,
 Արդար զայրութն անոր տուած է թեւեր,
 Դարդմանակէն ահաւոր է իւր երես,
 Եւ ղէնքերէն՝ իւր ակնարկն է մահաբեր:
 Կողքին կապած կը շարժի սուրն սայրասուր,
 Վրէժի թոյն կը կաթկրթի միշտ անկէ.
 Բայց իւր բաղուէն ահաւոր է քան իւր թուր,
 Իւր զօրութեամբ ժայռերն անգամ կը նեղեէ,
 Նեղ ձորերէն անցաւ արագ, սրտահեծ,
 Եւ հեռուէն տեսաւ իւր առւնն աւերտկ.
 Խոր հառաչ մը ղէնքն ու զրահն դող հանեց,
 «Աւերակնե՛ր, ծեղ պիտի տամ ես նոր կեանք»:
 Դողաց քաղաքն, դիաեն անոր անմըռունչ,
 Բոյոր սրտերն ընկնեց երկիւղն, վախն անբաւ.
 Կոյսը հրդօր շրջեց արագ քաղքին շուրջ,
 Եւ իշխանի պալատին՝ դէմ կանգ առաւ:
 Իւր ակնարկէն կը սարսափի ամէն բան,
 Աղջիկ չէ նա, դիւցազնուհի երկնային.
 Սաղաւարտի տակէն ծամերն կը ծփան,
 Խնչպէս առիւծ, երր կը ցնցէ բաշն ուժգին...
 Զայնի շեշտերն կարծագանգեն սրբընթաց
 Խնչպէս վագրի մըուռնչիւնը դառնաղին
 Երբոր իրմէ փոքրիկ ծագելն են խլած,
 Վրէժ լուծել կը խնդրէ մութ գիշերին:
 «Ելի՛ր, իշխան, լաղթականն է գէմդ եկած,
 Լուծել քեղմէ այնչափ պատուոյ վրբէժներ.
 Իշի՛ր գահէդ, որ արեան մէջ ես հիմնած,
 Պիտի ցուցնեմ քեղ իմ ցասում մահաբեր:
 Դրաած գլուխդ. անպատութեան կարմիր թագ

Սեւ հրամաններ բերնէդ կելնեն անխրաիր.

Եկած է ժամն վառել հողիդ դառնորակ.

Այն բոցերով, որ այնչափ սիրո այրեցիր:

Աստուած կարգեց զքեղ իշխան քաջարի,

Դու: բոլորին հանդէպ եղար գաւաճան,

Հայր էիր բու ժօղովրդեան և աղղի,

Բայց զաւակներդ անպատուեցիր ամէն ժամ:

Արտա՛քս ելիր, ահա սուրովս երկնառար.

Պիտի փշրեմ ես բոնութիւնն ու շղթայ.

Դարձ ի դար թող միշտ հնչէ արծագանդ,

— Անօրէնին պատիժն Աստուած միշտ կուտայյու: —

Կը դռչէ կոյսն, կը կրկնէ նոյնն և երկին,

Զրահի ցողքէն պալատի փոյցն է նրւաղ.

Կը դոփէ ծին և իւր կուրծքավ անաղին,

Կուզէ փշրել սիւներն մարմար ու չքնաղ:

Ապարանի գոնէն ահա հէք, մըռա՛լլ,

Ելաւ իշխանն կորաքամակ և անձայն.

Այսն ու հակատն ոնիրներով սևափայլ,

— Անիրա՛ւն է — հնչեց քաղաքն միաձայն:

Խոյացաւ. կոյսն, քաշեց առւրը շողշողուն,

Շարժեց արագ, զրաւ կրկին իւր պատեան.

Ինչպէս արփին կ'ելնէ ամպէն սևագյոյն,

Եւ անոր տակ կը ծոժկուի նոյն վայրկեան:

Քանդակազմարդ սեան քով ընկած է իշխանն,

Եւ զր թրուաւ բերնէն զղջման մէկ հնչիւն.

Ներկեց արեամբ մարմար քարն ու ապարան,

Որ տեսած է միշտ ոնիրներն իր անհուն:

Է.

Կոյսը շուտ թողուց այս ախուր պատկեր,

Իշաւ նրժոյգէն գնաց մուժ քանտեր.

Խորտակեց դռներն ծեռքերով շոշան,

Նեռս սուրաց արագ, ո՞հ, ի՞նչ տեսարան,

Պարկած է իւր հայրն սև քարին վրայ,

Զեռքերուն զարնուած պողպատէ շղթայ.

Կուրծքը վիրաւոր, դէմքը գալիահար,
 Զայնը մահագյժ, աչքերը խաւար:
 Բնկաւ շուտ դետին, դէնքերու շառաչ
 Հաղածեց խկոյն բանտերու հառաչ.
 Դրկեց հայրիկը, փարեցաւ կուրծքին,
 Եւ սժդոյն ճակասն քրսեց իւր այտին:
 «Խոնդրեմ, պատմէ ինձ, հայրիկ սիրադին,
 Ո՞հ, ի՞նչ ասանցանքներ ալսուեղ քեզ տուին.
 Ա՞խ, ի՞նչ էր արդեօք յանցանք սեռակ,
 Միթէ ոճի՞ր է պաշտպանել զաւակ:
 Հա՛յր, դու ինձ համար այս բանսերն ընկար,
 Այս կուրծքդ արիւնոտ եղաւ ինձ պատուար,
 Զկա՞ն սիրելիք, գնացի՞ն անյուշ,
 Ունիս մէկ դսարիկ, և ես հայր Օմ'անուշ:
 Կը պազնէ իւր հայրն, կողբալ խանդակաթ,
 Եւ դոյդ աչքերէն արցունք երկու կաթ
 Հօր աչքերուն մէջ սահեցան մեղմիկ,
 Բացուեցան աչքերն տեսաւ իւր աղջիկ:
 Նալեցաւ անոր, հագած է զրահներ,
 Զինչ երկնէն իշած հոգի լուսահեր.
 Անոր մէկ ժայիտն մոռցուց ամէն ցաւ,
 Անոր տաք շնչէն նոր ուժ ըստացաւ:
 Զեռքերով անոր դրկեց խիստ լուզուած,
 Համբուքեց դսարիկն, աղօթեց Աստուած.
 Եւ անսնց սրտի բերկութիւնն անհուն
 Բերկութիւն սիոնց աշխարհին ողջոյն:

* * *